

Հավելված N 2

ՀԱՊԿ Նախագահի 24ր հուլիսի 2025թ

թիվ 4 որոշման

Հ.Արրահամյան



**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**Պարա աթլետիկայի 2025 թվականի ԶԶ առաջնության**

Երևան 2025թ

## 1. Մրցաշարի նպատակները և խնդիրները:

- Մրցաշարի ուժեղագույների որոշումը.
- Պարա աթլետիկայի հավաքական թիմի թեկնածուների կազմի ձևավորումը
- Տաղանդավոր մարզիկների և մարզուհիների բացահայտումը.
- Պարալիմպիկ մարզաձևի զարգացումը և մասսայականացումը,
- Հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական պատրաստվածության բարձրացումը և մարզական վարպետության կատարելագործումը:
- Արդար խաղի, մրցակցության ու փոխըմբռնման ոգու ապահովումը:

## 2. Առաջնության կազմակերպումը.

Պարա աթլետիկայի ՀՀ 2025թ առաջնության կազմակերպիչը Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտեն է (այսուհետ՝ ՀԱՊԿ): Առաջնության կազմակերպումն իրականացվում է ՀԱՊԿ Պարա աթլետիկա մարզաձևի հանձնաժողովը և առաջնության Կազմկոմիտեն: Մրցաշարի կազմակերպիչը և իրականացնողները պատասխանատու են մրցաշարի պատշաճ անցկացման համար:

## 3. Արդյունքները

Առաջնության արդյունքների մասին արձանագրությունները ՀԱՊԿ-ը հրապարակում է [www.paralympic.am](http://www.paralympic.am) պաշտոնական կայքում՝ առաջնության ավարտից հետո 7-օրյա ժամկետում:

## 4. Մասնակիցներ և հայտերը

Պարա աթլետիկայի ՀՀ առաջնությանը կարող են մասնակցել 12 տարին մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը լրացող ֆիզիկական հաշմանդամություն ունեցող ՀՀ և Արցախից բռնի տեղահանված քաղաքացիները, որոնք ունեն համապատասխան բժշկական թույլտվություն:

Առաջնությանը չեն կարող մասնակցել ՀՀ օրենսդրության, Միջազգային պարալիմպիկ կոմիտեի կանոնակարգերի կամ ՀԱՊԿ կանոնադրության համաձայն որակագրված այն մարզիկները, որոնց որակագրկման ժամկետը ուժի մեջ է առ առաջնության մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետը:

Առաջնությանը մասնակցելու համար ակումբները, մարզական հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև անհատ մարզիկները մինչև **2025 թվականի օգոստոսի 27-ը, ժամը 15:00**, սահմանված ձևով լրացված մասնակցության հայտը պետք է ուղարկեն ՀԱՊԿ պաշտոնական [arm.paralympic@gmail.com](mailto:arm.paralympic@gmail.com) էլեկտրոնային փոստին կամ հանձնել ՀԱՊԿ գրասենյակ (ք.Երևան, Ծիծեռնակաբերդի 16 հասցե):

## 5. Մարզական դասակարգում

Մարզական դասակարգում չունեցող մարզիկների համար կիրականացվի ներքին մարզական դասակարգում:

## 6. Առաջնության անցկացման կանոններ

Պարա աթլետիկայի մրցումները կազմակերպվում են Պարա աթլետիկայի Միջազգային ֆեդերացիայի (WPA) հաստատած կանոնների համաձայն:

Ծրագրում ներառված են աթլետիկայի հետևյալ տեսակները սայլակավազք 100մ(տղամարդիկ և կանայք), վազք 100մ, գնդի հրում, սկավառակի նետում:

## 7. Առաջնության անցկացման ժամկետները

Առաջնությունը անց է կացվելու 2025 թվականի օգոստոսի 28-ից 29-ը:

	Օգոստոսի 28, 2025թ	Օգոստոսի 29, 2025թ
Մարզիկների ժամանում	V	
Մարզական դասակարգում	V	
Առաջնության մեկնարկ	V	
Սայլակավազք 100մ	V	
Վազք 100մ	V	
Գնդի Հրում		V
Սկավառակի նետում		V
Առաջնության ավարտ		V
Մարզիկների մեկնում		V

## 8. Առաջնության անցկացման վայրը

Մարզական դասակարգումը կանցկացվի Երևանի Ծիծեռնակաբերդի 16 հասցեում: Սայլակավազքի և վազքի մրցումները կանցկացվեն Արտաշատի քաղաքային մարզադաշտում, իսկ գնդի հրումը և սկավառակի նետումը Ծիծեռնակաբերդի 16 հասցեում գտնվող «Փյունիկ» ֆուտբոլային ակումբի մարզադաշտում:

## 9. Կացություն և սնունդ

Գիշերակացը կապահովվի Ծիծեռնակաբերդի 16 հասցեում գտվող «Փյունիկ հոթելում», Օգոստոսի 28-ից 29-ը: Գիշերակացով կապահովվի մինչև 10 մասնակից, իսկ սննդով՝ մինչև 34 մասնակից: Առաջնության ժամանակացույցի առաջին օրը կտրամադրվի ընթրիք, իսկ երկրորդ օրը նախաճաշ և ճաշ: Սահմանված քանակից ավելի մասնակիցներ լինելու դեպքում գիշերակացի և սննդի ծախսերը հոգում է գործուղող մարմինը:

Սույն կետում նշված տեղերի քվոտաները հատկացվում են առաջին դիմող առաջին ստացող սկզբունքով:

## **10. Տրանսպորտ**

Մարզերից ժամանող մասնակիցների համար կտրվի տրանսպորտային ծախսերի փոխհատուցում, իսկ սույն կանոնակարգի 8-րդ կետում նշված հասցեներ մասնակիցների և մարզագույքի տեղափոխումը կիրականացվի կազմակերպչի կողմից:

## **11. Մասնակցության վճարներ**

Առաջնությանը մասնակցության համար մասնակցության վճար նախատեսված չէ:

## **12. Մրցանակներ և պարգևատրումներ**

Առաջնության ընթացքում կխաղարկվի մեդալների 3 հավաքածու՝

- 1) տղամարդիկ սայլակավազք 100մ մրցատարածություն մեկ հավաքածու խառը դասակարգման (T52-T54) խումբ
- 2) կանայք սայլակավազք 100մ մրցատարածություն մեկ հավաքածու խառը դասակարգման (T52-T54) խումբ
- 3) տղամարդիկ Գնդի հրում մեկ հավաքածու խառը դասակարգման (F55-F57) խումբ

Խաղարկված մեդալները նվաճած մարզիկները կստանան դրամական պարգևներ ՀՀ կառավարության սահմանած չափերով:

Վազք 100մ մրցատարածության և սկավառակի նետում մրցաձևերում մեդալների հավաքածուի խաղարկում և դրամական պարգևների տրամադրում նախատեսված չէ:

Հավաստագրով կպարգևատրվեն առաջնությունում մրցած յուրաքանչյուր աթլետ՝ ըստ մրցաձևի, սեռի, իր անհատական դասակարգման խմբում նվաճած տեղի:

## **13. Ֆինանսավորումը**

ՀՀ առաջնության ֆինանսավորումը իրականացվում է ՀՀ Պետական բյուջեի միջոցների հաշվին՝ համաձայն ՀՀ ԿԳՄՄ նախարարության և ՀԱՊԿ-ի միջև կնքված դրամաշնորհային պայմանագրի, ինչպես նաև ՀԱՊԿ-ի միջոցներով:

## **14. Վեջնական դրույթներ**

Առաջնության հետ կապված բոլոր վիճահարույց հարցերը լուծվում են առաջնության կազմկոմիտեի և ՀԱՊԿ-ի կողմից: